զՍիրամարգ. պահ մի զսպենք մեր յուզմունքը, և ծափահարենք բնութեան այս անհման գեղեցկութիւնը։

Նաև ի Հայս կը գտնուի՞ Սիրամարգն. — կը սխալիմք. դա չէ բնիկ մեր աշխարհին՝ այլ մի փախստական օտար պանդուխտ. դա չի թափառիր մեր երկրի մութ անտառներուն և դալար դաշտաց մէջ, այլ ազատաբար իբր արքայազուն մի՝ մեն զայ ազգային և օտարազգի ազնուականաց բուրաստաններուն մէջ։

— Գոհոզ հաւ, ինչպէս ճարտար է ցոյց տալ իւր անձին գեղեցկութիւնը, սորա պատմուճանին վրայ կը շողշողին այնպիսի վառվռուն գոյներ՝ զորս անկարելի է որ քաջ Դիցիանոսք իրենց վրձնով ներկայացընեն պատատի մը վրայ. հանաբանական թանգարանաց մէջ չի կայ գեղանի պատուական ակունք մի՝ որուն լուսաւոր պատկերն չի զբաղուի սորա փետրոց վրայ. կ'ուզենք վայելել ծիրանի գուլոյ հրապուրիչ գոյները. — սևեռենք աչերնիս սիրամարգի պերճ տատն երկայն փետրոց վրայ։

— Մինչ նա կաղնոյ հոյանաւոր ճիւղերուն ներքևն վայելչաձև շարժուածքով կ'երթայ կը կանգնի արևահար սիրելի մարգին* մէջ, և կը բանայ իւր հովահարաձև տուաբ՝ ահա նոյն տատն իւր ամենէն սէգ վիճակին մէջ է, բայց հազիւ կը տեսնէ իւր ոտաբներուն տգեղութիւնը կը խպնի, և բարկութեան ոգով սար ճիչ մը իւր լանջքէն կ'արձակէ. «*Il est comme le paon qui crie en voyant ses pieds*», և կարծես կը դանդատի Արարչին, թէ ինչո՞ւ գեղանի պատմուճանին հետ իրեն չէ տուած նաև անոյշ ձայն և նազելի տոտիկներ։

— Նախնի բանաստեղծք իբր վարձք իրենց սիրուն հանճարոյն՝ կը պսակուէին սորա չքնաղ տատն փետուրներով։

— Հեթանոս Յոյները զայս նուիրած էին իրենց սիրելի չատուածուհւոյն որ յԱրգոս և յՈլիմպոս մեծամեծ պատիւներու կ'արժանանար. ըստ իրենց բանաստեղծներուն նոյն Արամազդայ հարսին կառքը մի զոյգ քնքուշ սիրամարգներ կը քաշէին։ Այսպիսի նշանաւոր հաւ մի՝ անկարելի է չի լինել նիւթ առակաց, այլաբանութեանց, զոր գրած են թէ նախնիք և թէ արդիք, յորոց մին ևեթ կը յիշեմք։

Ուշ դնենք թէ ինչ կը սուլէ մեր Գաշ առակախօսն* իւր մոգական եղեգէն. «Սիրամարգ զգեղեցկութիւն իւր ամենեցուն յայտնեալ՝ և գովեալ լինէր, և խորհի թագաւորել. և ոմանք իմաստունք խրատէին, եթէ չէ պարտ ի բանս հայել պատրանաց, զի ազգաւ է թագաւորել. և ոչ այսմ ունկնդիր եղեւ։ Եւ լուեալ արքային թռչնոց, և եկեալ եհար և զմանկունս նորա և զազգատոհմն նորա, և բազումք զթեւս նորա և զպիտուրս քարշեալ մերկացուցին. թագաւորութեան ոչ եհաս, և յիւրոց գեղեցկութեանց ևս թափեցաւ։

Բազմաց՝ ըստ առակիս՝ պատահեաց պատարիլ, զոմ յաջողմամբն թագաւորել. հրապուրեալք ի բանս յորդորչացն, յինքեանցն անկեալք, այնմ ոչ հասին»։

Գեղանի սիրամարգին առջև արագաքայլ կու գայ կը կանգնի փասեանը, ահաւասիկ թռչնոց գասուն ամենէն պերճագոյնն. կը շփոթի թռչնաբանն թէ՝ անոնցմէ ո՞րն կարդէ թագաւոր սիրուն թռչնոց։ Հպարտ թռչուն մ'է սա, և մասամբ իւրք գեղեցկութեամբ կը մրցի սիրամարգի հետ. սորա կեցուածքն աւելի ազնիւ է, քալուածքն ամբարտաւան, և փետուրք աւելի ազնիւ և շլացուցիչ աչաց։

Ման զանք թափառինք հայրենեաց հողին վրայ. ահա կը գտնեմք զայս ի Կարին, ի Սեբաստիա, ի Վան, յԱրցախս և յայլուր։

Բուն հայրենիքն սոյն պերճատեսիլ հաւին է փասիս գետին շրջակայքն կամ Ճորոխ գետն, որ Բարերդի լեռներէն բղխելով՝ Սեւ ծով կը թափի։ Կը համարուի որ Արգոնաւորդք նոյն կողմերէն զփասիան Յունաստան

* Հայկազեան բառգիրքի մէջ Սիրամարգ բառին իբր ստուգաբանութիւն գրուած է (Սիրամարգ Ταῶς, ταὼν. Pavo. որպէս այն՝ որ սիրէ զմարգս, կամ ճեմել ի մարգս)։

* Մխիթար Գոշ, ՃԼԶ. էջ 114։